26018

05 JAN 2010

Սպառողի սպասարկման վորակի կատարելագործումը— խանութային աշխատակիցների, կոոպերատիվ ակտիվի յեվ աշխատավոր մասսաների գործն է։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ 1931 Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Ռացիոնալացման աշխատանքները քաղաքային և բանվորական կոոպերատիվներում մոտակա շրջանի համար հիմնականում պետք է առանցք դառնա հետևյալ խնդիրների շուրջը՝

1. Սպառող բանվորի հետագա կարիքների սպասարկման վորակի բարձրացումը, կապված կենցաղամատակարարման վերակառուցման խնդիրների հետ։

2. Բոլոր սպասարկման միջոցների եժանացում, աչքի առաջ ունենալով ռեալ աշխատավարձի մակարդակի բարձրացումը։

3. Պայքար կորուստների և անբարեխիղճ կոոպերատիվ տնտեսության բնագավառում։

Ցելնելով հիշված խնդիրներից, 1931 թ. 1-ին կիսամյակում ռացիոնալացման աշխատանքները պետք է տարվին հետևյալ հիմնական բնագավառներում։

«Ա.» Բաշխիչների ու առեվտրական կետերի ցանցի ընդլայնումը յեվ կահավորումը

1. Առանձնապես ուշադրություն դարձնել փակ բաշխիչների կազմակերպման վրա։ Նկատի ունենալով, վոր ներկա ժամանակաշրջանում փակ բաշխիչները համապատասխանում են դասակարգային ապրանքաբաշխման սկզբունքներին և միաժամանակ ապահովում են բանվորական մասսաների առաջին հերթին և առավե-

26.018

05.05.2013

լագույն սպասարկումը, ձեռք առնել բոլոր միջոցներն ընդգրկել փակ բաշխիչներով ինդուստրիալ բանվորության 100 տոկոսը։

2. Հատուկ խանութների թիվը պիտի բազմապատկել ինչպես արագ փչացող մթերքների, նույնպես արդյունաբերական ապրանքների նկատմամբ, հատկապես այն մասում, որը տալիս է ընթացիկ տարում արդյունաբերության աճում (պատրաստի հագուստեղեն, կոշկեղեն, ամանեղեն, կահ-կարասի, կուլտ ապրանքներ և այլն)։

3. Հարկ յեղած դեպքում ավելացնել կոնտրոլ թվերը, կրպակների զարգացման խնդրում, հատկապես նոր կառուցվող շենքերի շրջանում։

4. Ցանցի լայնացման խնդրում, ուշադրության կենտրոնը դարձնել բանվորական շրջանները և ոգտագործել դատարկված այն շենքերը, որոնք գտնվելիս են յեղել մասնավոր առևտրականների ձեռքին ու ծառայել են իբրև առևտրական կետեր (խանութներ, շուկաներ, հրապարակներ, բազարներ և այլն)։

5. Ամեն կերպ զարկ տալ շրջիկ առևտրին։ Շրջիկ առևտուրը պիտի ընդգրկի ապրանքների հետևյալ ասորտիմենտը (տեսակները)՝ մրգեղենի ու բանջարեղենի ընդհանուր շրջանառության 50 տոկոս, իսկ կաթի ու նավթի 70 տոկոսը։

6. Կոոպերատիվների ուշադրության կենտրոնը դարձնել բաշխիչների ու առևտրական կետերի ռացիոնալ կահավորման խնդիրը։

7. Բոլոր այն բաշխիչներն ու խանութներն, որոնք իրենց ասորտիմենտի մեջ ունեն շուտ փչացող ապրանքներ, վոչ ուշ քան 1 մայիսի 31 թ. պիտի ունենան սառցապահարաններ, սառցարկղներ, ապահովելով միաժամանակ սառույցի պարբերաբար մատակարարումը։

«Բ» Սպառողի սպասարկման տեխնիկայի բնագավառում

8. Այն խանութները, որոնք պահում են ապրանքների խառը ասորտիմենտ, 4 հոգուց սկսած աշխատակիցների հաստիքով, նման խանութներում պետք է ստեղծել հատավաճառ ապրանքների բաժիններ։

9. Թափվող ապրանքների նախնական կշռումը հասցնել 100 տոկոսի։

10. Կազմակերպել ապրանքների տուն մատակարարման գործը և նախնական պատվերների ընդունումը։

11. Ընդարձակել արտադրական ձեռնարկներին կից բուֆետների ու բաշխիչ կետերի թիվը, գլխավորապես բազմամենային գործարաններում։

12. Մշակել պայմաններ կոլեկտիվ գնման գրքուկներով ապրանքամթերքներով ապահովելու առաջին հերթին ինքնագործող կոլեկտիվներին, բանվորական տներին, հանրակացարաններին և այլն։

13. Մթերային խանութների ասորտիմենտն ավելացնել կիսաֆաբրիկատ ապրանքներով։

14. Գաստրոնոմ բաժինների ասորտիմենտն ավելացնել պատրաստի բլյուդաներով (վինիգրետ, պաշտետ, սալատ և այլն), որի համար կազմակերպել բաշխիչներին կից հատուկ խոհանոցներ։

15. Ամեն կերպ զարկ տալ կոշկի նորոգման և պատրաստի հագուստեղենի վերանորոգման արհեստանոցների ձեռնարկումներին։ Վերջիններս կազմակերպել պատրաստի հագուստեղենի խոշոր խանութներին կից։

16. Կազմակերպել նույնպես արհեստանոցներ, որոնք զբաղվեն արդեն հագված հագուստեղենի վերա-

1006
26438

նորոգումով ու նորոգումով, և բացի դա, զբաղվեն նոր պատվերներ ընդունելու գործով։

17. Լայնացնել վարսավիրանոցների ցանցը, մոտեցնելով այդպիսիները բանվորական վայրերին։ Բաց ձևերի վարսավիրանոցներից բացի, կազմակերպել խոշոր բանվորական տներում փակ վարսավիրանոցներ։

«Գ» Պայքարը կորուստների դեմ, ապրանքների պահպանումը, պահեստային աշխատանքների կազմակերպումը, ցանցի մատակարարման յեվ տրանսպորտային աշխատանքների կանոնավորման բնագավառներում

18. Տնտեսավորության ու խնայողության նպատակով կազմել և հաստատել կայուն ծախսերի նախահաշիվներ ամեն մի առանձին խանութի համար։

19. Ապրանքների բնական պակասորդի չափերն իջեցնել այնպես, որ այդպիսիները զգալիորեն պակաս լինեն Առժողկոմատի կողմից հաստատված նորմաներից։

20. Բարձրացնել պահեստային աշխատանքների տեխնիկան հատուկ մեխանիզացիա մտցնել աշխատանքների պրոցեսների մեջ, ինչպես որինակ՝ բարձրացնող մեքենաներ, կոնվեյերներ, վագոնետկաներ և այլն։

21. Պահեստների ամբողջ ինվենտարը վերանայել, հատկապես ուշադրություն դարձնել կշռող մեքենաների վրա և հարկ յեղած դեպքում ձեռք առնել վերանորոգման միջոցներ։

22. Հատուկ պայմանագրեր կնքել Ոսո-Ավիոքիմի հետ սիստեմատիկ կերպով պայքարելու միջատների ու մկների դեմ։

23. Կայուն որացուցային դասավորում մտցնել առևտրական կետերին հերթականությամբ ապրանքներ բաց թողնելու համար։

24 Կանոն դարձնել 2 որ տուաջ առևտրական կետերից պահանջագրեր ընդունելն՝ ինչպես հեռախոսով, նույնպես գրավոր կերպով։

25. Բոլոր կենտրոնական բանվորական կոոպերատիվները - պիտի մշակեն կայուն տախտակ դեֆիցիտային ապրանքներն առանձին կետերին բաշխելու համար։

26. Կարգավորել տարայի տնտեսումը, պարտադիր դարձնելով բոլոր խանութներն ու կետերն ազատ տարան 3 որվա ընթացքում վերադարձնելու պահեստներին։

27. Կազմակերպել տարայի նորոգման արհեստանոցներ կամ պայմանավորվել այլ կազմակերպությունների հետ տարայի նորոգման աշխատանքները նրանց հանձնելու համար։

28. Ռեալիզացիայի յենթարկել անպիտանի տարաները, վորոնց վերանորոգումն այլևս անհնարին է։

29. Սեփական տրանսպորտի աշխատանքները կարգավորել և հարմարեցնել այնպես, որ առևտրական կետերին ապրանքները հասցնվեն առանց ընդմիջումների և ուշացումների։ Այդ նպատակով պետք է կատարել հետևյալ աշխատանքները՝

ա) Տրանսպորտի աշխատանքները վերափոխել անընդհատ բանվորական շաբաթի։

բ) Ավելացնել փոխադրման միջոցները։

գ) Բոլոր փոխադրման միջոցները պետք է ունենան կոոպերատիվի մարկայի ցուցանակը։

դ) Տրանսպորտի աշխատանքները դարձնել յերկու հերթի։

30. Ինչպես կանոն, անպայման հաստատել հետևյալ ապրանքների գիշերվա մատակարարումը՝ հաց, միս և կաթ, այն քանակությամբ, որով հնարավոր լինի անընդհատ ապահովելու սպառողի պահանջները։

31. Կտրուկ միջոցներ ձեռք առնել վերջ տալու տրանսպորտի անտեղի կանգնեցնելուն (պրոստոյներին) դանդաղկոտության և այլն։

32. Կազմակերպել հատուկ տրանսպորտանորոգման արհեստանոցներ կամ պայման կնքել համապատասխան մարմինների հետ սիստեմատիկ նորոգումները (ռեմոնտ) նրանց հանձնելու։

«Դ» Ռացիոնալացման պլանի միջոցառումների կիրառումն ու հաստատությունը

33. Սույն ծրագիրը ստանալուց անմիջապես կազմել կոնկրետ որացուցային ծրագիր ամեն մի ձեռնարկի համար առանձին, որտեղ ցույց տալ կիրառման պատասխանատու անձանց։ Կազմած ծրագիրը քննության առնել կոոպ. ակտիվի, խանութային հանձնաժողովների, պրոֆեսիոնալ և այլ հասարակական կազմակերպությունների հետ միասին։

34. Ժամանակին ծրագիրը կազմելու անձնական պատասխանատվությունն ընկնում է այն վարչության անդամի վրա, որը ղեկավարում է ռացիոնալացման աշխատանքները։

35. Կիրառման ստուգման պատասխանատվությունը դնել վարչության նախագահի և վերստուգիչ հանձնաժողովի վրա։

36. Վարչության լայնացրված նիստերում լսել մինիմումի կատարման, նրա ընթացքի մասին զեկուցումները ըստ առանձին ձեռնարկների։

37. Ինֆորմացիա տալ պատի թերթերի միջոցով մինիմումի կատարման ընթացքի մասին։

38. Հայտարարել պարգևատրում արժեքավոր առաջարկներն ու գյուտերը, որոնք տրվում են մրցման, կամ սովորական կարգով։

39. Մոբիլիզացիայի յենթարկել կոոպ. ակտիվը և աշխատակիցներին ամեն ամսյա կիրառման ստուգում անցկացնելու նպատակով։ Նույնպես կազմակերպել հատուկ բրիգադներ, որոնք պետք է ստուգման յենթարկեն ռացմինիմումի կիրառումը տեղերում։

40. Լայն կերպով ոգտագործել սոցիալիստական մրցումը ռաց-մինիմումի կատարման բնագավառում։

Հայկոոպի վարչ. նախագահի տեղակալ՝ Ա. Մանուչարյան
Ռացիոնալիզատորական սեկցիա՝ Ա. Շահնազարյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0208008

ՀԱՑԿՈՈՊԻ տպ. Մարքսի 29. պ. 16. Գրատ. 6158բ. Տիրաժ 1500

2280

334.5
Ռ-18

334.5
Ռ-18